Արձանագրություն 3

«Բերդի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ԲՅՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ն. Բերդ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26 փետրվարի 2019թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Նախագահ՝

Ա. Դավթյան հաշվապահ

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ

Գ. Մկրտումյան տնտեսվար

Լ. Մեջլումյան խոհարար

Քարտուղար՝

Գ. Ղարաբաղցյան գնումների համակարգող

Օրակարգ

1. **Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին**

1.1 Հաշվի առնելով, որ ԲՅՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած Նորայր Առուշանյան Ա/Ձ-ի, 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած ՀՊիրամիդա Կվինտ՝ ՍՊԸ-ի, իսկ 22-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած ՀՅուրգաս՝ ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացել է պատասխան, այն է՝ Նորայր Առուշանյան Ա/Ձ-ի և ՀՊիրամիդա Կվինտ՝ ՍՊԸ-ի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին: Նորայր Առուշանյան Ա/Ձ-ն և ՀՊիրամիդա Կվինտ՝ ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել են հրավերով պահանջված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը և որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

ՀՅուրգաս՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 16.000 (տասնվեց հազար) ՀՀ դրամի ժամկետանց հարկային

պարտավորություն: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների ընթացակարգին մասնակցության իրավունք չունեն այն մասնակիցները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Քանի որ §Յուրգաս¦ ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը /16.000 ՀՀ դրամ/ գերազանցում է իր ներկայացրած գնային առաջարկի 1 տոկոսը /5120 ՀՀ դրամ/, ուստի գնահատող հանձնաժողովը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն **որոշեց.**

ա/ ԲՅՄ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում Նորայր Առուշանյան Ա/Ձ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր: 7-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է համարվում §Պիրամիդա Կվինտ¦ ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

բ/ Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 44-րդ կետով՝ **որոշեց** մերժել §Յուրգաս¦ ՍՊԸ-ի հայտը 22-րդ չափաբաժնի մասով և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված չափաբաժնի մասով գնման ընթացակարգը համարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Դավթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Մկրտումյան

_____ Լ. Մեջլումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Ղարաբաղցյան